Հավելված
Գյումրի համայնքի «Լապտերիկ – մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N 66-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լապտերիկ – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	Թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը)
1	2	3	4	5
1.	**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լապտերիկ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակի (0.5դրույք)**	**1) Որակավորման պահանջները՝** **նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝** 1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական ստաժ: **2) Ընդհանրական պահանջները.** Նախադպրոցական ուսումնական հաստատության դասիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ ակտերի այն դրույթները, որոնք վերաբերվում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա «Կրթության մասին» ,«Նախադպրոցական կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին », «Հանրակրթության մասին» «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության, համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը», նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերվող նախարարության նորմատիվ ակտերը,	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:	1)դիմում (Ձև 1). 2)անձը հաստատող փաստաթուղթ. 3)կրթության մասին փաստաթուղթ. 4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում). 5)ինքնակենսագրություն. 6)մեկ լուսանկար՝3x4 չափի. 7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

		իրավական այլ փաստաթղթեր. բ. նախադպրոցական մանկավարժության , հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի , անատոմիայի, սանիտարական գործի , հիգիենայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկան, լողի ուսուցման մեթոդիկան՝ ըստ տարիքային խմբերի , ջրում մնալու կանոնները. գ. Անվտանգության տեխնիկայի պահանջները, ֆիզկուլտ – առողջարարական միջոցառումների անցկացման ժամանակ, ֆիզիկական զարգացման շեղում ունեցող երեխաների հետ աշխատելիս՝ արատաբանության հիմունքները և համապատասխան մեթոդիկան:		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**			**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2025 թվականի հոկտեմբերի 16–ին, ժամը՝ 14:30	**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Լապտերիկ – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 077620143) Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմվերի 2024 թվական N1981- Ա/2 հրաման):** **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:**			**2025 թվականի հոկտեմբերի 9 -ը ներառյալ:**